

ՄԱՐԿԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒԼՈՒՄԸ ԲՈՒՄԱՆՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ

Գ. Հովհաննիսյան, Մ. Ավետիսյան

Առածների ստեղծողը՝ ժողովուրդը իր ստեղծագործականությամբ հնարավորություն է ընձեռում խոսելու առանձնահատուկ ժողովրդական մոտեցման գոյության մասին, որի ներքո իմաստավորված է լուսաբանված են կյանքի ամենաբազմազան երևույթները, այդ թվում մարդու գործունե առնչությունները բուսական և կենդանական աշխարհի հետ, որոնք ներառվում են յուրաքանչյուր մշակույթի առարկայական գործունեության մեջ:

Ժողովրդի առածների ու ասացվածքների թվում պատմամշակութային և ճանաչողական առանձնահատուկ արժեք են ներկայացնում այն առածներն ու ասացվածքները, որոնք իրենց բովանդակությամբ ու ձևով, հաճախ էլ միայն ուղղակի իմաստով, արտացոլում են դարերի ընթացքում ժողովրդի ապրած միջավայրը, կյանքի պայմանները և դրանց միջոցով փոխադրված բնավորության ուրույն գծերը: Դրանք այն տիպական միավորներն են, որոնք, չնայած միջմշակութային շփումների շնորհիվ փոխ են ասելվում մի ժողովրդից մյուսը, սակայն երկնականում ճանաչելի են որպես տվյալ ժողովրդի ազգային մշակույթի քաղկացուցիչ տարրերը:

Բացի ժողովրդի գործունեության, մշակույթի ոլորտները, փորձը և արժեքները արտացոլելը լեզուն ձևավորում է մտքերը, ապահովելով դրանց արտահայտման մշակութային առանձնահատկությունները, որոնք ոճից բացի սահմանվում են նաև հաղորդակցման նորմերով: Եվ շատ հաճախ, հաղորդակցվելիս, այս կամ այն մարդկային արատն ու թերությունը մատնանշելու համար ժողովուրդն օգտագործել է փոխաբերված կամ ընդհանրական փորձից արտածված ասույթներ: Այս ասույթները, բացի էթիկական արժեք ունենալուց, ունեն տվյալ ժողովրդի համար նշանակալից բարոյաևոգնական կամ որակների լեզվականացման արժեք և հանդիսանում են ազգային մշակույթի ու փորձի անբաժնելի մասը:

Այս հոդվածի նպատակն է վեր հանել լեզվի դարձվածաբանության մեջ և առանձնապես ու ասացվածքներում տեղ գտած այն մշակութային առանձնահատկությունները, որոնք կապված են մարդու բնավորության գծերի, մարդկային որակների և դրանց լեզվական իմաստավորման ու գնահատման հետ: Նրբորեն է այս առանձնահատկությունները նկատել Մարինա Յվետևան. «Ныне вещи на этом языке не мыслятся»: Լեզուն, ասես լինելով մտքի աչքը, գնահատում է պահպանում է հիշողության մեջ այն էականն ու կենսականորեն կարևորը, որը հետո կազմում է տվյալ ժողովրդի գործունեության հիմքն ու արժևորման սկզբունքը:

Դարձվածաբանական միավորները, ինչպես նաև առանձներն ու ասացվածքները, ավելի, քան լեզվական մյուս միավորները՝ բառապաշարը կամ քերականությունը, արտացոլում են ժողովրդի ոչ միայն գիտակցությունը և մտածողությունը, այլև իմաստների և արժեքների այն ոլորտները, որոնք ձևավորվում են և միաժամանակ իրենք են ձևավորում տվյալ ժողովրդի հուզական և գեղամանրային աշխարհը: Նշենք, որ հուզականությամբ համարվում է ենթագիտակցության ոլորտի դրսևորում և համընդհանուր է մարդ ապրածի համար, իսկ գեղամանրների աշխարհը անմիջականորեն կապ ունի գնահատողական համակարգի հետ և արտացոլում է ժողովրդի կողմից գիտակցված, մշակութային իմաստները: Այս ոլորտները փոխադրվելով են և նույնպես կարգավորվում են լեզվի միջոցով, արդեն նկարագրվելով որպես բնավորություն:

Հոգեբանությունը [Բաղդասարյան, 1996; Գրիգորյան, 1967; Մելքոնյան, 1984; Պողոսյան, 1991] բնավորությունը սահմանում է որպես պատմամշակութային գոյացություն, որը «անհի անհատական յուրաքանչյուրությունների ամբողջությունն է, որը ձևավորվում ու դրսևորվում է գործունեության և շփման ժամանակ՝ պայմանավորվելով վարքագծի անհատական յուրաքանչյուրությունները»: Միաժամանակ անհի բնավորության ձևավորումը տեղի է ունենում նրա հասարակական կեցության, սոցիալական խմբի կամ ընդհանրության ազդեցության

մերը, ինչը ծնում է «բնավորության տիպական գծեր», որոնք որոշվում են մարդկանց կենսական շարք բնորոշ հանգամանքներով որոշակի, կոնկրետ պատմական պայմաններում:

Յուրաքանչյուր ազգ, այսպիսով, պատմական զարգացման ընթացքում, զարգացնում է ունի թափափորության իրեն բնորոշ գծերը և լեզվում «արձանագրում է» այդ գծերի կարծրատիպային ինքնագիտակցությունը: Եթե նման գուգահեռ անց կացնենք լեզվի պատմական զարգացման տեսանկյունից, ապա կրկնվելու պիտի լինենք Մեպիրի և Ռարիի տեսակետը: Նշենք, որ այս տեսակետը հաստատող բավականին լայք այնպիսի տեսություններ կան ինչպիսիք ենի իմաստային տարրերի/պլիմիտիվների/ կամ Է. Ռոշի պրոտոտիպների տեսությունը: Մյանք լայք նույնությամբ են հասարակության որևէ միավորի վարքային և լեզվական իմաստների ընդհանրական հիմքերի բացահայտման, ուրեմն և դրան տիպաբանական համեմատությունների շրջանագծման համար: Անդրադառնալով լեզվաշխարհի մշակութային գործոնին, լեզվաբանները փորձում են լեզվի մեջ գտնել իմաստային նվազագույն տարրեր՝ պլիմիտիվներ և ազգային վարքագծի ու բնավորության մասին տիպական ընդհանրացումներ կատարել: Այս նպատակով առաջ են քաշում «ազգամշակութային իմաստություն» հասկացությունը՝ որպես իմաստային տիպերի համեմատության նվազագույն միավոր /1/: Մենք ևս, անդրադառնալով Է. Ռոշի պրոտոտիպների տեսությանը, կփորձենք այս հոգվածի շրջանակներում անցկերենի և նայերենի դարձվածաբանական միավորները ենթարկել գուգացություն, վեր հանելու համար իմաստային ընդհանրական տիպերն ու դրանց լեզվականացման առանձնահատկությունները: Խստատման համար հենք այս միավորն էլ ընտրում ենք որպես գուգարական տիպաբանական նմուշագույնների՝ անփոփոխ:

Վ.Պ. Ջինյենկոն նշում է որ, իմաստը դա գիտակցականի ձև է, որն առաջանում է անձի աշխարհընկալման և մշակութային փորձի ձևաբանման հետ միաժամանակ: /Ջինյենկո 1991:23/ լեզվի և իմաստի կապն առավել ակնհայտ է, քանզի լեզուն ոչ միայն իրականության իմաստային փոխակերպումն է, այլև գիտակցության գոյի ձևը, որի արտահայտումը նույնպես իրականացվում է իմաստի միջոցով:

Այսպիսով, ամփոփենք մեր արձարածն հիմնադրույթները.

ա. լեզուն սլարունակում է ազգային բնավորության և գործունեության մասին տեղեկություններ:

բ. լեզվի տիպը և բնավորության տիպը, ուրաքանչյուրը իր օրինաչափություններով հանդերձ՝ կախված են մեքարտ կողմից իրեն շրջապատող աշխարհի իմաստավորման առանձնահատկություններից:

գ. դարձվածաբանական միավորները, առանձնում ու առաջվածքները պարունակում են տվյալ լեզվամշակութային իմաստային տարրերը՝ իրավությունները և նախատիպերը:

դ. այդ իմաստային տարրերի բացահայտումը ենարավոր է միջլեզվամշակութային գուգարություն միջոցով, որն իր հերթին լեզվի իմաստաբանական մակարդակի տիպաբանական հետազոտությունների հիմք է հանդիսանում:

Ընդված դրույթները ուզում ենք հիմնավորել բուստուններն պարունակող առանձնի և առաջվածքների օրինակով: Հայտնի է, որ բուստունները առարարն հանդիպում են տարբեր լեզուների ԴՄ-ներում: Սակայն դժվար չէ նկատել, որ ոչ բոլոր բուստնն են հիշատակվում միևնույն լեզվամշակութային առանձնում կամ առաջվածքներում: Ինչ վերաբերվում է միջմշակութային փոխակերպմանը, այստեղ գործում է որոշակորեն բարձր հաճախականության Վգությունը. հիշատակվում են այն բուստնները, որոնք առավել մեծ տեղ են զբաղում տվյալ ժողովրդի կենցաղում:

Գ. Լ. Պերմյակովը [Пермяков, 1970: 20] գտնում է, որ տարբեր ազգերի առանձնը և առաջվածքները շատ հաճախ արտացոլում, կադապարում են միևնույն, մոտ իրավիճակներ՝ չնայած նրանց էթնիկական, աշխարհագրական, պատմական և լեզվական յուրահատկություններին: Մենք հակված ենք այդ ընդհանրությունները դիտել որպես կենսականորեն իմաստավորման նախատիպեր: Լեզվաբանի դասակարգման մեջ բոլոր առարար-առաջվածքային միավորները (անկախ իրավությունների տրամաբանական, իսկ մենք ավելացնենք՝ լեզվամշակութային տարբերակներն են:

Ուշադրե՛ք, որ Գ. Պերմյակովը առարար-առաջվածքային միավորները հետազոտելու ավելի մեծ շարժարտություն է դարձնում լեզվաբանական և տրամաբանական-նշանային պլաններին, քան՝ իրականությանը: Մինչդեռ, վերջինս, մեր կարծիքով, առարար-առաջվածքային միավորների լայրժք և ամբողջական հետազոտման տեսանյունից կարևոր նշանակություն ունի և չպետք է անտեսվի կամ թերազնահատվի:

Արդ, ընդունելով Գ. Պերմյակովի առանձնացրած տրամաբանական կաղապարները և ավելացնելով մեր կողմից տարրորոշված նոր իմաստային տարրեր, ներկայացնենք բուսական ապարոմալոգ անգլերեն, հայերեն և ռուսերեն առաձայնագրվածքային միավորները ըստ իմաստաբանական համարժեքության:

Կարևոր է նշել այն փաստը, որ եթե խոսքը բնավորության գծերի և մարդկային որակների մասին է, բնականաբար, ուսումնասիրության ենթակա լեզվական միավորներում դրանք ներկայացված են որպես առկա կամ բացակա. կամ դրական նշանով, կամ՝ բացասական: Այս ենթատիպն էլ առանձնացվում է որպես ուրույն իմաստային տարր:

Այսպիսով, ուսումնասիրելով մեր կողմից հավաքված լեզվական նյութը, հանգել ենք այն ընդհանրացմանը, որ մարդուն գնահատում և բնութագրում են ըստ

- արտաքին տեսքի /դեմք, հասակ, նմանություն, կամ տարբերություն այլ մարդկանցից/
- ֆիզիկական բնորոշ գծերի /տարիք, առողջություն, անհատականություն/
- անձնային որակների /վսիկություն, արիություն, .../
- խոսքի առանձնահատկությունների /շատախոս, շփվող, ծույլ, գաղտնաբան,

բուսաբանություն/

• բարոյա - էթիկական նկարագրի /հյուրասեր, բարի, կյանքի փորձ ունեցող, հաջողակ/

Համապատասխանաբար, ելակետ ընդունելով անգլերենի առաձայնագրվածքային և դարձվածաբանական միավորները, դրանք խմբավորել ենք ըստ հետևյալ իմաստային տարրերի

• *Դեմք, երես* - անգլ. as red as a rose, as red as a cherry - հայ. մի կծած խնձոր Այստեղ rose" և "cherry" բուսանունների դիմաց հայերենում ունենք խնձոր:

• *Հասակ, կառուցվածք* - "to spring like a rose" առաջվածքների մեջ ի նկատի են առնում աճի արագությունը: հայերենում կա հասակ նման արտահայտությունը, որում, չնայած բուսանուն չկա, քայց նմանել բառը գուցարկվում է. ընձյուղ հասկացության հետ, քանի որ հայերենում կա ընձյուղ նմանել կապակցությունը:

Իսկ «բարձրահասակ», «լավ կառուցվածքով» իմաստները իրենց տեղն են գտել անգլ. as straight as a cedar, ռուս. как верёвка, հայ. բարդու պես բարակ, չինարի քյա տալիսներում:

• *Արտաքին տեսք*. "մարդուն միայն արտաքինով չպետք է դատել" իմաստը արտահայտվում է հետևյալ առածում - անգլ. You cannot judge a tree by its bark. Այս առածում համեմատվում են «ծառ և ծառի կեղև» բառերը: «Ծառ» բուսանունը բնութագրում է մարդու ներքին էությունը, իսկ «ծառի կեղև» հասկացությունը՝ արտաքինը: Հայերենում այս իմաստն արտահայտված է մի շարք ԱԱԲ-ներով, որոնցից ոչ մեկը, սակայն, բուսանուն չի պարունակում:

• *Նմանություն* իմաստն արտահայտվում է as... as, like համեմատական կառույցների միջոցով: As/ like an apple to an apple

• *Տարբերության* իմաստ, որը նույնպես արտահայտվում է համեմատական կառույցներով, սակայն վերջիններս կազմվում են երկու տարբեր իրակությունների զուգադրմամբ. As/ like as an apple to an oyster. As/ like as an apple to a nut.

• *Փորձված-անփորձ* կամ *տարիքով-երիտասարդ* իմաստը արտահայտվում է խառն տարբեր վիճակների փոխաբերմամբ, ինչպես՝ as green as leek, as green as grass, between grass and hay.

Ժամանակի ընթացքում մարդը կորցնում է իր ուժն ու հմայիլ արտաքինը, ծերանում է և այս միտքն արտահայտվում է - The bloom is off the peach - առաջվածքի մեջ: Կան նաև մի շարք այլ առաջվածքներ, որոնք բնութագրում են տարեց մարդկանց, ինչպես օրինակ՝ «փորձառու մարդ, որը խորհրդի կարիք չունի» հասկացությունը - crab tree - կամ - the older the crab tree the more crabs it bears - առաջվածքներում:

Տարեց մարդկանց բնորոշ անհարմարվողականության իմաստը անգլերենում արտահայտում են remove an old tree and it will wither to death առաջվածքով:

Այսպիսով, մեծ է առածների ու առաջվածքների ճանաչողական և իմացական արժեքը: Դրանք աչքի են ընկնում իրենց պատկերավորությամբ, հարուստ հոգ են փոխաբերական կաղապարների և առավել փոքր և «շարժուն» լեզվական միավորների՝ դարձվածքների ստեղծման համար: Բիշ խոսքով մարդկային էության մասին շատ բան ասելու բացառիկ ուժը, պարզությունը, կոնկրետությունը, բնութագրումների դիպուկությունը և գունագեղությունը նրանց բնորոշ առանձնահատկություններն են: Դրանք ձևավորվում են իմաստային համընդհանուր տարրերի լեզվական և պատմամշակութային «զգեստավորման» տարբերակներում և բացահայտելի են իմաստային տիպական կաղապարների օգնությամբ:

- Կիրան Դ., Երկիր: Երևան: Սովետական գրող, 1981 - 397 էջ:
- Մուրադյան Է.Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, Երևանի պետ. համալս., 1984.- 370 էջ:
- Հաղդասարյան Վ.Գ. Դարձվածք, առած և ասացվածք, ներքին ձևի տարբերությունների շուրջ: Ռուսական բանասիրություն, № 4 /հոդվածների ժողովածու/, Երևան, Երևանի պետ. համալս. հրատ., 2007.- 240 էջ:
- Ա. Վ. Կունին, «Ժամանակակից անգլերենի դարձվածաբանությունը» /Մոսկվա -1972 /:
- Ա. Վ. Կունին, « Անգլերենի դարձվածաբանությունը» /Մոսկվա -1970/ :
- Ա. Պ. Սմիրն, «Անգլերենի դարձվածաբանությունը» 1952:
- Arnold I.V. The English Word. Moscow: Higher School, 1973.-293p.
- Брутян Г.А.О гипотезе Сепира – Уорфа. ВВФ., 1969, т.1.
- Виноградов В.В. Об основных типах фразеологических единиц в русском языке. М. Учпедгиз, 1986. – 416с.
- Выготский Л.С. Собрание сочинений. М., 1981-198812.Гачев Г.Д. Национальные образы мира. М. Сов. писатель, 1988.- 445,с.
- Леонтьев А.Н. Деятельность. Сознание. Личность. М., 1975.
- Потебня А.А. Слово и миф. Москва: Правда, 1989.- 622 с.
- Потебня А.А. Теоретическая поэтика. Москва: Высш. шк., 1990.-343 с.

Բառարաններ

1. Ա. Տ. Ղանալանյան «Մեծանի» /Երևան-1960/
2. Ա.Մ. Սուրիապյան, Ս. Գալստյան «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան» /Երևան-1975/
3. Ա. Լ. Մկրտչյան; Պ. Մ. Պողոսյան «Հայ-աշխարհի դարձվածաբանական բառարան» / Երևան-1975
4. В. Даль, “ Пословицы русского народа” Москва 2003
5. М. И. Дувронни, “Английские и русские пословицы и поговорки” Москва 2008
6. Лотман Ю.М., Русская фразеология. Москва 1996

Резюме

В этой статье мы обращаем особое внимание на то, как отражается человеческий фактор в формировании с одной стороны культуры, а с другой стороны языка, и, соответственно, на все языковые аспекты, в том числе и на пословицы и поговорки, которые выявляют самого человека, различия его внешние, внутренние и духовные особенности. Пословицы и высказывания отражают все аспекты человеческой жизни и широко применяются благодаря своим структурно-семантическим особенностям. Исследование пословиц очаровало очень многих ученых разнообразием дисциплин, и этим можно объяснить обильную библиографию работ, посвященных пословицам.

Мы полагаем, что научное значение этой работы обеспечит обильный материал для дальнейших работ над фразеологией.